

Doi: 10.56737/2953-7843-2025.05-120

ԱՆԿԱՐԵԼԻ Է ԼՈՌԻԹԵԱՆ ՄԱՏՆԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ¹

Արցախեան շարժման արշալոյսին՝ իր հարցազրույցներից մէկի ընթացքում ԽՍՀՄ ողջ տարածքում ինչպէս եւ միջազգային մեծ հեղինակութիւն վայելող հասարակական գործիչ Ելենա Բօնէրը, հանդէս գալով ի պաշտպանութիւն պատմական արդարութեան, խիստ քննադատութեան էր ենթարկում Արցախն ու Նախիջեւանը Ադրբէյջանին բռնակցողներին ինչպէս եւ վերջինիս վարած քաղաքականութիւնն ու տմարդի բարքը: Ներկայ լրագրողներից մէկն ընդհատելով հետաքրքրուեց, թէ արդեօք Բօնէրի նման կեցուածքը պայմանաւորուած է իր հայկական ծագմամբ², ինչին ի պատասխան յայտնի ալլախոհը հանգիստ բացատրեց, որ ինքն այդպէս է խօսում, պարզապէս որովհետեւ չի կարող լռութեան մատնել ճշմարտութիւնը: Նոյնն էր պատճառը, որ Բօնէրից մօտ կէս դար առաջ, լեհ մարդասէր, իրաւապաշտպան Բոգդան Գեմբարսկին Հայկական հարցից, մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւնից՝ Եղեռնից եւ փոխհատուցումից էր խօսում, մինչդեռ շատերը փորձում էին հայկական արիւն գտնել իր արմատներում, կարծելով, թէ այդ լեհական անունով ծայտեալ հայ է գործում³:

Ճշմարտութիւնը լռութեան մատնել չկարողացող-չկամեցողների

¹* Ստացուել է՝ 4.03.2025, գրախօսուել է՝ 4.04.2025: էլ. հասցէ՝ arshakm48@gmail.com:

² Ելենա Բօնէրը Լեւոն Սարգսի Քոչարեանի Լուսիկ անունով կնքուած դուստրն էր, որին պահել եւ մեծացրել է խորթ հայրը՝ Գեորգ Սարգսի Ալիխանեանը. տե՛ս https://web.archive.org/web/20090701210417/http://www.peoples.ru/state/statesmen/elena_bonner/index.html. հմմտ https://hy.wikipedia.org/wiki/Ելենա_Բոննէր, հմմտ. A. STANLEY, M. SCHWIRTZ, Elena Bonner, Widow of Sakharov, Dies at 88. «The New York Times», 19 յուն., 2011:

³ Տե՛ս ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ, Նամակներ աշխարհին, Երեւան, 1990, էջ 138, հմմտ. ԳԵՒՈՐԳ ՄԵԼԻՔ-ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ, Ա. ՍԱՐԵԱՆ, Ապագազուլթացման եւ ցեղասպանութեան դատապարտման երկսայրի սուրը, «Էջմիածին», Ցաւելուած, 2024, էջ 105–106:

շարքում թերեւս առաջիններից մէկը Գրէյս Հիգլի Նափն է (Կրէյս Նաբ, Քնեպպ⁴), որի՝ «Առաքելութիւնը Վանում» (Թուրքիա) պատեհագմի ժամանակ»⁵ եւ «Բաղէշի ողբերգութիւնը»⁶ գրքերը ականատեսի ամենավաղ գրառումներից են Եղեռնի մասին:

Ցաւով պէտք է նկատենք, որ չնայած իր թողած կարեւոր հրատարակութիւններին, Նափը հայերէն համացանցում շատ քիչ է յիշատակւում, աւելի հազուադէպ շրջանառուելով հայերէն տպագիր գործերում: Իր մասին նախնական արձագանքները Կոստանդնուպոլսի «Աւետաբեր» կրօնական, ուսումնական, ընտանեկան եւ քաղաքական շաբաթաթերթի էջերում են: 1895-ի թիւ 17–18-ում Գրէյսի հօր՝ վերապատուելի Նափի մահախօսականում յիշուած են իր զաւակները. «Վեր. Նաբ իր սերունդէն իբրեւ իրեն յաջորդ մեր մէջ կը թողու երկու հոգի, մեծ որդին Վեր. Ճօրճ եւ մեծ դուստրը շնորհափայլ Միս Կրէյս»: Նոյն պարբերականի 1902 օգոստոսի համարում «Մաունդ-Հօլեօք Պիթլիզի աղջկանց ամերիկեան դպրոց»⁷ խորագրի ներքոյ հեղինակը ներկայացնում է Բաղէշի դպրոցը անուանապէս յիշելով Նափին. «Մաունդ-Հօլեօք Պիթլիզի աղջկանց ամերիկեան դպրոց գիտութեանց եւ պատմութեանց վրայ փոքր ի շատէ ծանօթութիւն կը ստացուի: Սակայն Բարոյագիտութեան եւ կրօնի մեծ զարկ կը տրուի եւ տրուած է: Բացի ամերիկացի երկու վարժուհիներէն 6–7 տարիէ հետէ կը պաշտօնավարէր Մր. Նաբի դուստր Կրէյս Նաբ (այժմ յԱմերիկա)»: Յաջորդ յիշատակումն աւելի քան յիսուն տարի յետոյ է՝ «Արծուի Վասպուրական» երկամսեայի 1955 թ. ԻԴ. հատորում⁸: Պարբերականի՝ «1915-ի Վանի ինքնապաշտպանութիւնը» յօդուածում գրուած է. «Միս Կրէյս Նափ օրէ օր կ'արձանագրէր կռիւները եւ թէ քանի թնդանօթներ արձակուած էին հայերուն վրայ»: Եւ վերջապէս արդէն մեր դարում՝ Յարութիւն Իսկահատեանի՝ «Վկայարան հայկական ցեղասպա-

⁴ Այս տարբերակի համար տե՛ս «Հայկական հարց. հանրագիտարան», Երեւան, 1996, էջ 269:

⁵ GRACE HIGLEY KNAPP, The mission at Van in Turkey in War Time, Privately Printed, 1916, 48 էջ, նկ. 1: Գրքի վերնագրին հակառակ, որ թերեւս խմբագիրների, հրատարակչութեան քաղաքականութեան արդիւնք է, իր նամակերում Նափը կիրառում է «Վան. Արմէնիա» ձեւը. տե՛ս նկ. 2, <https://compass.fivecolleges.edu/islandora/object/mtholyoke%3A24574>:

⁶ GRACE H[IGLEY] KNAPP, The Tragedy of Bitlis: Being Mainly the Narratives of Grisell M. McLaren and Myrtle O. Shane, Copyright, 1919, by Fleming H. Revell Company, 176 էջ, նկ. 3:

⁷ Օգոստոս 1902:

⁸ Մարտ–ապրիլ, թիւ 11:

նութեան»⁹ Զ. գրքի⁹ մատենագիտական գրառումն է. «Կրէյս Հ. Նափ, «Բաղէշի Ողբերգութիւնը», «Ֆլեմինկ հ. Ռեւել Քոմբանի» հրատ., Նիւ Եորք, ԱՄՆ, 1919, փոքր չափի 160 էջ», որին հետեւում է Գրէյսի գրքի համառօտ վերապատմութիւնը¹⁰: Ուշագրաւ է «Իրատեսի» (23.06.2017)¹¹ հաղորդումը՝ Խսկական ամերիկացիները. «Բիթլիսում (Բաղէշ) առաջին միսիօներները Զորջ եւ Ալզինա Նափ ամուսիններն էին, որոնք այստեղ ոտք դրեցին 1858 թ. եւ ստիպուած հեռացան 1895-ին՝ համիդեան ջարդերի պատճառով: Նրանց յաջորդեցին Լիսանդր եւ Սարա Բրբանքները (1860—1870), Ռոյալ ու Լիզի Քոլերները (1884—1907), Նափ ամուսինների որդի Զորջ-կրտսերը, որ ծնուել էր Բիթլիսում, եւ նրա կին Աննան (1890—1915), նոյն ամուսինների դուստր Գրէյսը, որը Բիթլիսից յետոյ ուսուցչութիւն արեց Վանում եւ էրզրումում...»:

Համացանցային հանրագիտարանում իր մասին յօդուածը միայն արաբերէն եւ անգլերէն է, հայերէն տարբերակ չկայ: Տեղեկութիւնները սակաւ են, աւելի շատ Եղեռնի պատմութիւններն են հիմնուած Նափի հրատարակութիւնների վրայ: Անգլերէն տարբերակում առկայ կենսագրական տուեալները սրանք են.

«Գրէյս Հ. Նափ (21 նոյեմբերի, 1870 — 14 մարտի, 1953) ամերիկացի քրիստոնեայ միսիօներ եւ ուսուցչուհի: Ծնուել է Բիթլիսում, միսիօներ ծնողների ընտանիքում: Հայրը՝ հովիւ Զորջ Քուշինգ Նափը նուիրուեալ միսիօներ էր, իսկ մայրը՝ Ալզինա Զրչիլ Նափը, ուսուցչուհի: 1883 թուականի ապրիլին, 12 տարեկան հասակում, ուսում ստանալու նպատակով Գրէյսը տեղափոխուում է Ամերիկա: Ուսանում է Մասաչուսէթսում, Վերմօնթում եւ Իլինոյսում: 1889 թուականին ընդունում է Մաունթ Զօլիօք քօլէջ, որ աւարտում է 1893-ին: Նոյն տարուայ հոկտեմբերին վերադառնում է Օսմանեան կայսրութիւն եւ սկսում է դասաւանդել Բաղէշում գտնուող «Մաունթ Զօլիօք ճեմարանում», որ իր անունն ստացել էր Ամերիկայում գտնուող ուսումնական հաստատութեան օրինակով: Հետագայում Գրէյսն ուսուցչութիւն է արել նաեւ Կարինում (էրզրում) եւ Վանում, իր քարոզչական գործունէութեան ընթացքում ականատես լինելով Հայոց ցեղասպանութեանը:

⁹ Անթրիաս, 2016:

¹⁰ Տէս էջ 12—20:

¹¹ Տէս <https://www.irates.am/hy/1498200538>:

Թուրքիայում իր սպասաւորութիւնն աւարտելով Գրէյս Նափը վերադառնում է Միացեալ Նահանգներ, հաստատուում է Նիւ Եորքում, որտեղ 1918–1923 թուականներին աշխատում է որպէս մամուլի պատասխանատու հայ-ասորական օգնութեան յանձնախմբում¹²։ այն մարդասիրական կազմակերպութիւն էր, որ ստեղծուել էր ցեղասպանութիւնից փրկուած հայերին եւ ասորիներին օժանդակելու համար։ Աւելի ուշ տեղափոխուելով Բօստօն, Մասաչուսէթս Նափն իր գործունէութիւնը շարունակել է իբրեւ խմբագիր Ամերիկեան արտասահմանեան առաքելութիւնների յանձնակատարների խորհրդում (1923–1940)»¹³։ Սրան թերեւս պէտք է յաւելել Դ. Պ. Քաշինգի կազմած մամուլի հաղորդագրութիւնը՝ Գրէյս Հ. Նափի՝ Արտասահմանեան առաքելութիւնների յանձնակատարների ամերիկեան խորհրդից թոշակի անցնելու մասին¹⁴, որ ներկայացնում ենք թարգմանաբար։

«Բօստօն, Մասաչուսէթս, Մարտ 12. — օրիորդ Գրէյս Հ. Նափը, որ բնակւում է Օբերնդէյլի Հէնքօք փողոցի 138 հասցէում, վերջին 17 տարիներին եղել է Ամերիկայի Արտաքին Առաքելութիւնների խորհրդի խմբագրական բաժնի անդամ եւ այդ խորհրդի նախկին միսիօներներից է, որ սպասաւորել է Թուրքիայում։ Նա աւարտել է ծառայութիւնը, եւ այսօր խորհրդի Հոգաբարձուների յանձնախումբն իր հերթական աշխատանքային նիստում յատուկ շնորհակալութիւն է յայտնել իրեն։ Յանձնախումբը յայտնել է իր «խորին գնահատանքը նրա երկարամեայ, նուիրուած եւ բանիբուն ծառայութեան համար՝ թէ՛ որպէս միսիօներ Թուրքիայում եւ թէ՛ որպէս օգնական խմբագիր ու գրադարանավար Բօստօնի կենտրոնական գրասենեակում։

Նախքան 1922 թ. խմբագրական աշխատանք ստանձնելը Missionary Herald ամսագրում, որը ներկայացնում էր Եկեղեցիների ներքին եւ արտաքին միսիօներական գործը, օրիորդ Նափը դասաւանդել է Բիթլիսի իգական դպրոցում, որ կոչւում էր «Մաունթ Զօլիօք սեմինարիա»։ Օրիորդ Նափը ծնուել է Թուրքիայում՝ միսիօներութեան մեկնած առաջին սերնդի ծնողներից, որ սպասաւորել են Արեւելեան Թուրքիայի տարածքում։ Կրթութիւնն ստացել է Ամերիկայում եւ աւարտել է Մաունթ Զօլիօք քոլէջը՝ ստանալով գրականութեան բակալաւրի որակաւորում։

¹² Անգլ. American Committee for Armenian and Syrian Relief: Յայտնի է նաեւ որպէս Մերձաւոր Արեւելքի հիմնադրամ Near East Foundation:

¹³ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Grace_Knapp:

¹⁴ Տե՛ս <https://compass.fivecolleges.edu/islandora/object/mtholyoke%3A24589>:

Թուրքիայում ապրելու տարիներին օրիորդ Նափն ականատես է եղել երկու պատերազմի՝ Ռուս-թուրքականին, երբ Բաղդադից եկող զորքերը անցան քաղաքով եւ հարաւից եկող մի քանի հազար քուրդ զինեալներ աւարառեցին ու սպանդ իրականացրին: Օրիորդն այնտեղ է եղել նաեւ Ա. աշխարհամարտի ժամանակ, որի առաջին տարում, երբ օրիորդն ամերիկացի միսիօներների փոքր խմբի հետ Վանում էր՝, թուրքական բանակը մէկ ամիս շրջափակման մէջ պահեց նրանց եւ շուրջ 40 000 հայերի: Նրանց միաբանական համալիրը ականակոծութեան էր ենթարկուել, եւ Նափի կացարանը վնասուել էր:

Ամերիկա վերադառնալուց յետոյ, օրիորդ Նափը գրի է առել իր տեսածը եւ հրատարակել է «Բիթլիսի ողբերգութիւնը» վերտառեալ գրքով:

Մերձաւոր Արեւելքում եղած տարիներին նա սպասաւորել է նաեւ Մերձաւոր Արեւելքի Օգնութիւն կազմակերպութիւնում՝ աշխատելով հայ ժողովրդի մէջ, իսկ յետոյ իր նպաստն է բերել Նիւ Եորքի գրասենեակներում:

Ամերիկեան Խորհրդի կենտրոնական աշխատակազմին միանալուց ի վեր, օրիորդ Նափը մասնագիտացել է խմբագրական աշխատանքի մէջ՝ խմբագրելով նաեւ Ամերիկեան Խորհրդի տարեկան զեկոյցը եւ տարեգիրքը՝ միաժամանակ ծառայելով նաեւ որպէս օգնական գրադարանավար»:

Գալով Գրէյս Նափի գրական ժառանգութեանը, նախ նկատենք, որ բացի վերելում յիշատակուած արձակ գործերից նա բաւականին գեղեցիկ բանաստեղծութիւններ է յօրինել, յստակ յանգաւորմամբ եւ չափով, որ սակայն քրիստոնէական սիրոյ ծիրից դուրս չեն գալիս: Փոխարէնը յոյժ արժեւորելի են իր երկու գրքերը: Դրանցում առկայ շատ դրուագներ նկարագրութիւններն են այնպիսի յանցագործութիւնների, որոնք վաղեմութեան ժամկէտ չեն ճանաչում: Եւ եթէ նոյնիսկ անմիջաբար յանցանք կատարողները (որ փաստօրէն սպանութեան գործիքներն են) չկան, այնուամենայնիւ դրանց ոգեշնչած եւ հրահրած, դրանց յանցանքի արդիւնքները վայելող պետութիւնը կայ, եւ անխուսափելիօրէն վաղ թէ ուշ ստիպուած է լինելու ճանաչել, զղջալ եւ փոխհատուցել:

Ցեղասպանութեան վաւերական վկայութիւն լինելուց բացի Նափի գրքերն ամփոփում են նաեւ ուշագրաւ դիտարկումներ մարդկային էութեան, տարբեր ազգերի ներկայացուցիչների վարքագծի եւ բարդ իրավիճակներում ցուցաբերած դրսեւորումների մասին: Պատերազմական գործողութիւնների ընթացքում յաջողութեան նժարը յաճախ է փոխել իր

ծանրութեան կողմը, եւ այդ ժամանակ Գրէյսի անկողնակալ աչքը նկատել է տարբեր ազգերի էական տարբերութիւնը՝ կարճ գրառմամբ ասելով այն, ինչ կարող ենք աւելի ընդլայնուած պատկերացնել: Ահա մեր ընկալմամբ մի բնորոշ օրինակ. «Քաղաքից ոչ բոլոր թուրքերն էին փախել: Որոշ ծերեր, կանայք եւ երեխաներ մնացել էին, ոմանք թաքնուել էին: Ի տարբերութիւն թուրքերի հայ զինուորներն այդ մարդկանց դէմ պատերազմ չէին վարում»¹⁵:

* * *

Մէկ այլ դրուագում հեղինակը խօսում է թուրք կանանց մասին, որոնց հանգրուան էին տուել միսիօներները. «Գաղանաբարոյ կազակները թուրք կանանց օրինական որս էին համարում: Ու թէեւ ռուս գեներալը մեզ տրամադրել էր մի փոքրիկ պահակախումբ, առաջին երկու-երեք շաբաթների ընթացքում հազուադէպ էր լինում մի գիշեր, երբ դօկտօր Ուշերը եւ պարոն Նարօն ստիպուած չէին լինում վռնդել յելուզակներին, որ, պահակներին շրջանցելով, կարողացել էին մագլցել համալիրի պատերը»¹⁶:

* * *

Բայց նափի նկատած ամենասուր հակադրութիւնը մեր կարծիքով սա է. «Իսլամի ազդեցութիւնը իր հետեւորդների վրայ քրիստոնէութեան համեմատութեամբ երբեք այդչափ կտրուկ հակադրութեամբ չէր երեւցել: Մինչ հայ փախստականները միմեանց օգնում էին եւ ինքնազոհութեան օրինակ էին հանդիսանում, այս մուսուլմանները (իմա՛ թուրքերը) ներկայանում էին որպէս կատարեալ եսասէր, անզգայ եւ միմեանց տառապանքներին անտարբեր: Այն դէպքում, երբ հայերը կորովի էին, յուսավառ եւ ապշեցուցիչ կենսունակութեամբ կառչել էին կեանքին, թուրքերը՝ կորցրած առ Աստուած հաւատն ու առանց կեանքի նկատմամբ որեւէ յոյսի, հիմա զրկուելով նաեւ կեանքի հանդէպ յոյսից, տոկունութեան ու ապրելու կամքի բացակայութեան պատճառով այժմ մահանում էին՝ ինչպէս աղեխանգարման (dizenteria) ճանճեր»¹⁷:

¹⁵ Վանում, էջ 27:

¹⁶ Անդ, էջ 27—28:

¹⁷ 28:

Ստորեւ ներկայացնում ենք երկու հատուած Գրէյս Նափի՝ Բաղէշի ողբերգութիւնը գրքից, որ հեղինակը մակագրել է. «Ի յիշատակ իմ սիրելիների՝ հայրիկիս, մայրիկիս, եղբօրս, «մօրաքոյր Շարլօթի եւ մօրաքոյր Մերիի» էլիի, որ յանուն Քրիստոսի իրենց կեանքերը մատուցեցին Բիթլիսի հայերին: Նրանց սիրած ու փայփայած ժողովրդի տառապանքների ու խիզախութեան մասին այս պատմութիւնն ընծայւում է իրենց»:

* * *

է. Տղամարդկանց կոտորածը

Պետական պաշտօնեաները շարունակ վստահեցնում էին ամերիկացիներին, թէ միայն սահմանամերձ գիւղերն են տեղահանւում, եւ քաղաքում ոչ ոքի ոչինչ չի սպառնում: Լուրեր էին տարածւում, թէ ռուսներն օրէցօր մօտենում են: Իշխանութիւններն արդէն պատրաստուել էին, [որ պահը գալուն պէս] կարեւոր շինութիւնները հրոյ ճարակ դարձնեն եւ արագ հեռանան: Մի օր Մօտկանից քաղաք եկան մի խումբ քրդեր, որ յայտնի էին պետական իշխանութիւնը մշտապէս չարաշահելու հանգամանքով: Իսկ երբ սրանք հեռանում էին, իւրաքանչիւրն [արդէն] զինուած էր ժամանակակից հրացանով ու փամփուշտի բաւարար պաշարով: Ո՛չ ամերիկացիները, ո՛չ հայերը այդ ժամանակ դեռ չէին կասկածում, թէ կոտորածը կառավարական հրամանով է կազմակերպուել, եւ նրանք ամենեւին չէին պատկերացնում, թէ ինչ են անելու Մօտկանի քրդերը, երբ կայագօրը դուրս բերուի: Հայերը թոյլտուութիւն էին խնդրում, որ գան ամերիկեան տարածքներ՝ պաշտպանութիւն ստանալու համար: Նման համընդհանուր թոյլտուութիւնն անշուշտ խուճապ առաջ կբերէր ինչպէս եւ խնդիրներ իշխանութիւնների հետ: Բայց այսուամենայնիւ հովուին, ուսուցիչների եւ մի քանի այլ ընտանիքների թոյլ տրուեց անարգել մուտք գործել, իսկ միւսներին խոստացան, որ իրական վտանգի դէպքում իրենք եւս նման արտօնութիւն կստանան: Մի պայման առաջադրուեց, որ բոլոր արտօնութիւն ստացողներն իրենց հրազէնը յանձնեն պարոն Նափին:

Յունիսի 22-ին վերապատուելի Խաչիկ Վարդանեանը, որը երկար տարիներ եղել էր Բիթլիսի բողոքական եկեղեցու հովիւն ու բողոքական համայնքի պաշտօնական ներկայացուցիչն էր կառավարութիւնում, Բիթլիսի ամենաազդեցիկ եւ մեծարգոյ քաղաքացիներից մէկը, ձեռբակալուեց եւ բանտարկուեց, երբ գնում էր Վալիին դիմելու մի խումբ փախստականների անունից:

Յունիսի 23-ին ամերիկեան տարածքը շրջափակեցին զինուած բանակայիններն ու ոստիկանները: Պարոն Նափը Մէյնարդ դղեակում էր, իր սեփական նստավայրում, իսկ չորս տիկնայք՝ Միս էլիի տանն էին: Անհանգստանալով, որ ինչ-որ բան կարող է կատարուել եւ զգալով, որ իր տեղը աղջիկների դպրոցում է, Միս Շէյնը կամեցաւ այնտեղ գնալ, սակայն փողոց տանող դարպասի մօտ կանգած պահակը զէնքի սպառնալիքով նրան ստիպեց վերադառնալ: Սպաներն ու զինուորները, զինուել էին մինչեւ ատամները, կարծես աւազակախմբի հետեւից էին եկել, այլ ոչ թէ օրէնքին հնազանդ մի քանի հայերի: Եւ այժմ յայտնաբերուեցին եւ ձերբակալեցին առաքելութեան տարածքում գտնուող բոլոր տղամարդիկ ու տասը տարեկանից բարձր բոլոր տղաները, այնուհետեւ նրանց կանգնեցրին դպրոցի դաշտում՝ ժանդարմների հսկողութեան ներքոյ, ասես յանցագործներ էին: Մի զինուորի կանգնեցրել էին հանդիպակաց տանիքին, ուր նա պարբերաբար ոստնում էր ինչպէս կապիկ՝ ամեն անգամ հրացանն ուղղելով հաւաքուածների կողմը: Դիմադրութիւնը ոչ միայն անօգուտ, այլեւ վնասակար կլինէր. զէնքի առկայութիւնն ու կիրառումը ոչ միայն տղամարդկանց, այլ նաեւ կանանց ու երեխաների ճակատագրի համար բացասական ազդեցութիւն կունենար: Վերջիններս խմբուել էին իրենց ամուսինների, եղբայրների ու հայրերի շուրջ, ամուր փարուել էին նրանց ու դառնօրէն արտասուում էին: «Ինչու էք այսքան աղմուկ բարձրացնում: Նրանց միայն ինչ-որ հարցով քննութեան են տանում: Ի հարկէ, նրանք բոլորն անմեղ են ու շուտով կը վերադառնան»,— ասում էին զինուորները:

Պարոն Նափն շտապեց Վալիի մօտ՝ իր հետ տանելով քոյր Մարթային՝ յոյս տածելով, թէ գերմանուհին կարող է հասու լինել գործի բուն էութեանը եւ, գուցէ, ապահովել տղամարդկանց ազատ արձակումը: Վալին ընդունեց նրանց իր սովորական քաղաքավարութեամբ, հանգիստ լսեց նրանց պատմածն ու խնդրանքը, ապա ասաց, որ կառավարութեանը յայտնի է, թէ Վանում կամ Բաղէշում մի հայ կամ մի քանի հայեր թշնամուց նամակներ են ստացել, եւ բոլոր տղամարդկանց ձերբակալելու նպատակը այդ նամակներն ստացողների ինքնութիւնը պարզելն է: Երբ նրանք յայտնաբերուեն, նրանց կվերաբերուեն իբրեւ դաւաճանների, իսկ միւսներն ազատ կարձակուեն՝ իրենց անմեղութիւնն ապացուցուելուն պէս: Յանկացած դիմադրութիւն անընդունելի է, եւ նման փորձերը անմիջականօրէն կվտանգեն շինութեան եւ յարակից կառույցների ու տարածքներում գտնուող բոլոր անձանց:

Տղամարդկանց քայլեցրին դէպի բանտ: Մի բարի ծերունի, որ երկար տարիներ դասաւանդել էր դպրոցում, սփոփում էր իր տագնապած աշակերտներին. «Մի՛ երկնչէք. նրանք մեզ հալածելու են մեր կրօնի համար, իսկ մենք հաւատարիմ պիտի մնանք Քրիստոսին»: Մի քանի տղաների հետ ուղարկեցին, քանի որ չափազանց փոքր էին: Քաղաքի ողջ տարածքում տղամարդկանց ու պատանիներին ձերբակալում էին՝ փողոցում, իրենց կրպակներում, տներում, իսկ եթէ որեւէ մէկը դիմադրութիւն էր ցոյց տալիս, նրան անմիջապէս սպանում էին: Ոմանք թաքնուել էին իրենց տներում եւ հրաժարւում էին դուրս գալ: Այդպիսիներին այրում էին իրենց ընտանիքի հետ միասին: Եւ ահա յայտնաբերեցին մի տղամարդու: Նա թաքնուել էր մի տան մէջ, որի մի մասը տեսանելի էր օրիորդաց դպրոցի պատուհաններից: Ասես որսորդական շներն աղուէսի հոտն առած լինէին: Թուրքերը ոռնոցով վազեցին բոլոր կողմերից: Մի քանիսը բարձրացան հարթ կտուրի վրայ եւ իրենց հրացանները ներքեւ ուղղեցին, որ խփելու յարմար դիրք ունենան, եթէ նա փորձի փախչել: Անհնազանդութիւնն ու խառնակութիւնը տեւեցին մօտ երկու ժամ, սակայն Միս Շէյնը, որ այդ ամենի սկիզբ առնելու ականատեսն էր, աւարտին վկայ չեղաւ:

Մի տան մէջ երկրի նահապետական սովորոյթով մի մեծ գերդաստան էր բնակւում՝ բազում որդիներն իրենց հայրերի ու ընտանիքների հետ: Եւ տանը տասը հրացան կար, որ բաւական արդիւնաւէտ կերպով կիրառեցին ոստիկանութեան դէմ: Բայց ի վերջոյ տունը հիմնովին այրուեց, բնակիչների մի մասը հրոյ ճարակ դարձաւ, մնացածները նահանջեցին մառան, որտեղ նրանք պաշարման համար սնունդ եւ ջուր էին կուտակել: Ոստիկանները շուտով հասկացան, որ այնտեղ դեռ կենդանի մարդիկ կան, եւ փորձում էին նրանց դուրս բերել: Այդ պահին պատահաբար այնտեղով անցնող միս Մաքլարէնը տեսել էր փողոցում խմբուած բազում զինուորների, որ շէնքին էին նշան բռնել: Այլ Ոստիկաններ փորձում էին գերաններով խոյահարելու եղանակով խորտակել մառանի պատերը՝ միաժամանակ աշխատելով չայտնուել լուսամտի տեսածիւրում: Երեկոյեան այդ տնից քոյր Մարթայի մօտ բերեցին երկու փոքր տղաների, որ ծանր վիրաւոր էին: Տղամարդիկ վերջ ի վերջոյ ստիպուած էին եղել յանձնուել:

Բանտից այդտեղ բերեցին երկար տարիներ կառավարութիւնում իբրեւ փաստաբան ծառայած հօրը, որ տեսնի իր տան աւերակները եւ հաս-

կանայ, թէ ինչ է լինում, երբ ենթական հակադրում է իր կառավարութեանը: Սա ցուցաբերուած ամենաուժեղ դիմադրութիւնն էր քաղաքում ծաւալուած ձերբակալութիւնների դէմ: Շատ դէպքերում տղամարդիկ հանգիստ կերպով էին յանձնուում՝ հաւատալով, թէ շուտով ազատ կարձակուեն: Կառավարութեանը հիանալի կերպով յաջողուեց իր հաւաստիացումներով մոլորեցնել մարդկանց: Ամերիկացիներին եւս կառավարութիւնը մի քանի անգամ մոլորեցրեց իր խոստումներով: Բուժհաստատութեան բոլոր հայ հիւանդապահները, դեղագործներն ու բուժականները նոյնպէս ձերբակալուեցին:

Այլեւս կարելոր չէր, որ նրանք ամենաբանիբուն ու նուիրուած օգնականներն էին, եւ թուրք հիւանդների համար արդէն դեղորայք պատրաստող չկար. այդ ամենը նշանակութիւն չունէր՝ բոլորը պէտք էր գնային: Առաջին զոհը մի երիտասարդ էր, որ աւարտել էր Խարբերդի Եփրատ վարժարանը եւ աշխատում էր ռազմական հիւանդանոցում: Նա փորձել էր իր հարազատներին որոշ պատկերացում տալ Բաղէշում տիրող իրավիճակի մասին եւ [նամակում] խօսել էր գաւառ խուժած մարախի բազմութեան մասին: Նրա ակնարկը հասկացել էր գրաքննիչը. նրան ձերբակալեցին եւ հսկողութեամբ տարան: աւելի ուշ մի քուրդ հարեւան ամերիկացիներին յայտնել էր, որ նրան տարել են քաղաքից ոչ հեռու եւ այնտեղ սպանել:

Քաղաքում երկու հայ վիրաբոյժներ կային՝ երիտասարդ, բարեխիղճ, ոգեշնչուած եւ նուիրուած իրենց գործին: Իրենց պարտականութիւնները նրանք այնպէս էին իրականացնում, որ այն, ինչ կատարում էր իրենց ժողովրդի հետ, չազդի իրենց վրայ:

Մի առաւօտ նրանք յայտնեցին քոյր Մարթային եւ Միս Մաքլարէնին, որ իրենց հրահանգուել է մեկնել Սերթ, որպէսզի դեկավարեն այն հիւանդանոցը, որը Զեդէթ բէյը հիմնում էր այնտեղ: Աւելի ուշ մի թուրք բժիշկ պատմեց միսիօներներին, որ նրանց մարմինները տեսել է ճանապարհի եզրին ընկած՝ քաղաքից մօտ վեց մղոն (9,6 կմ) հեռաւորութեան վրայ:

Քոյր Մարթան եւ Միս Մաքլարէնը Վանից իրենց հետ Բաղէշ էին բերել երկու հայ պատանիների, որոնք աշխատել էին այնտեղի գինուորական հիւանդանոցում, եւ որոնց համար քոյր Մարթան ռազմական իշխանութիւններից անվտանգութիւն երաշխաւորող թղթեր էր հայթայթել: Երբ Բաղէշի տղամարդկանց քաղաքից տանում էին, այդ տղաներից մէկը հիւանդանոցում հիւանդ պառկած էր: Քոյր Մարթան, լսելով, որ նրան միւս հա-

յերի հետ միասին տարել են, գնաց ոստիկանապետի մօտ՝ տեղեկացնելու այդ թղթերի գոյութեան մասին եւ խնդրելու, որ տղային վերադարձնեն: Ոստիկանապետը խոստացաւ, թէ համապատասխան կարգադրութիւն կը տայ: Երբ նա կրկին գնաց տեսնելու ոստիկանապետին, վերջինս ասաց, թէ տղային վերադարձնելն այլեւս անհնար է, քանի որ նրան սպանել են հէնց այն օրը, երբ դուրս են տարել, իսկ նրա ընկերոջը խնայել են:

Մի քանի օր շարունակ բողոքական կանայք սնունդ էին տանում բանտ եւ ազատ խօսում էին տղամարդկանց հետ, որոնք հաւաքւում էին պատուհանների մօտ:

Բանտարկեալները լուր էին փոխանցել քարոզիչներին, որ վերջիններս ճիշտ էին վարուել՝ առաքելութեան տարածքում գէնք չթուլատրելով, ամբողջ այս գործը կառավարութիւնն այնքան սատանայական կերպով էր ծրագրել, որ սկզբից եւ եթ տղամարդկանց փրկութեան որեւէ հնարատրութիւն չկար: Նրանք աղօթում էին, որ գոնէ կանանց ու երեխաներին փրկելու ջանքերը յաջողութեամբ պսակուեն: Մէկ շաբաթ այսպէս շարունակուելուց յետոյ մի առաւօտ կանանց յայտնեցին, որ բողոքական հոսանքի բոլոր ներկայացուցիչներին տեղափոխել են ստորգետնեայ մթին բանտախոց: Հետագայում տարբեր պատմութիւններ էին շրջում այն մասին, թէ ինչ էր պատահել այդ տղամարդկանց հետ, սակայն միակ յստակ յայտնի բանն այն էր, որ նրանց դուրս էին բերել խմբերով եւ սպանել քաղաքի մօտակայքում:

Հստ մի պատմութեան, որի ճշմարտացի լինելու հանգամանքը պարոն Նափը համարում էր բաւականին հիմնաւոր, գրեթէ եօթ հարիւր հոգուց բաղկացած մի խումբ տարուել է քաղաքից գրեթէ վեց մղոն հեռատրութեան վրայ գտնուող մի վայր եւ մարդկանց շարել են պատրաստի խրամների երկու կողմերում: Այնուհետեւ վրայ են հասել քրդերը եւ կոտորել բոլորին:

Առաքելութեան տարածքում գտնուող տղամարդկանցից մի քանիսն առաջին խուզարկութեան ժամանակ թաքնուել էին եւ այդպէս փրկուել: Նրանցից մէկը Դեւորգ էֆենդի Դուլումճեանն էր՝ Այնթապի Կենտրոնական վարժարանի շրջանաւարտ եւ արական վարժարանի ուսուցչապետ: Բայց նա որոշեց, որ ինքը փրկութեան մտքով չպէտք է տարուի, որովհետեւ յայտնաբերուելու դէպքում վնասելու է միսիօներների խնամքի տակ գտնուող կանանց ու երեխաներին: Ինքը լոկ մի քանի տարի առաջ էր ամուսնացել իգական վարժարանի ուսուցչուհիներից մէկի հետ՝ մի դի-

ցուհու, որ արտաքինով հրապուրիչ էր, իսկ բնաւորութեամբ՝ հիասքանչ։ Նրանց սիրավէպը սրտայոյզ էր եղել, իսկ միաւորումը ոչ թէ սովորական պայմանաւորութիւն չէր երկու ընտանիքների միջեւ, այլ իսկական «սիրոյ միութիւն»։

Իր հարսանիքի օրը Հեղինէն ոչ թէ արեւելեան սովորութեամբ մուգ մետաքսեայ թիկնոց էր կրում, այլ նմանուել էր ամերիկացի հարսնացուի՝ իր ժանեկազարդ քօղով, նարնջագոյն ծաղիկներից հիւսուած պսակով եւ հարսանեկան ծաղկեփնջով. մի գեղեցիկ տեսարան, որը խոր տպաւորութիւն էր գործել ներկայ երիտասարդութեան վրայ։ Նրանց ամուսնական կարճ կեանքը, բացառութեամբ առաջնեկի մահուան, շատ երջանիկ էր եղել։ Իսկ այդ պահին նրանք մէկ տարեկան մի գեղեցիկ դուստր ունէին։

Գեւորգ էֆենդիի որոշում կայացնելու յաջորդ օրն իսկ ոստիկանութիւնից հաղորդեցին, որ պատրաստուում են խուզարկել ամերիկեան տարածքը՝ թաքնուած տղամարդկանց յայտնաբերելու նպատակով։

Այդ առաւօտ երիտասարդ զոյգը մի քանի ժամ առանձին մնաց, ապա միացան դպրոցի դահլիճում հաւաքուածներին, որ պատրաստուում էին յանձնուել եւ խոնարհ սպասում էին այն պահին, որ անխուսափելիօրէն պէտք է բաժաներ նրանց։ Կինը նստած էր ամուսնու ոտքերի մօտ՝ երեսխան գրկին։

«Միս Շէյն, եթէ մեզ երկուսիս էլ տանեն, կարո՞ղ ես մեր երեսային պահել»,— հարցրեց Գեւորգ էֆենդին։

Երբ ոստիկանութիւնը եկաւ, Գեւորգը եւ իր երիտասարդ հարսնեղբայրը հանգիստ ձեռք ձեռքի տուեցին բախտակիցների հետ՝ կարծես պարզապէս զբօսանքի գնացողներ լինէին։ Եւ ով էլ տեսնէր Տիկին Հեղինէի դէմքի քաղցր ու անկոտորում արտայայտութիւնը, չէր կռահի, որ հեռացողն իր ամուսինն էր, իսկ պատանին՝ իր եղբայրը։ Գեւորգ էֆենդին ուժեղ եւ յաղթական էր թւում, որովհետեւ, թէեւ գիտէր, որ գնում է մահուան, գիշերն աղօթքով անցկացնելով, իրեն պատրաստել էր գալիքին եւ վախ չունէր։ Եւ եթէ իր շուրջը եղած [ոստիկանները] նկատելու ունակ աչքեր ունենային, նրանք կը տեսնէին «Աստծու Որդու» նմանութեամբ մի կերպար, որ քայլում էր Գեւորգի կողքին՝ հնոցի կրակների միջով։

Ը. Կամանց տեղահանութիւնը

Երկու-երեք օր անց, երբ ամերիկեան տարածքից տղամարդկանց տարան բանտ, Վալին տեղեկացրեց պարոն Նափին, որ հայերի ընդհա-

նուր տեղահանութեան հրաման է եկել, սակայն ընտանիքներին թոյլ կտրուի, որ ապահով եւ միասին հեռանան: Այնուամենայնիւ, մի քանի օրից (յունիսի 29 կամ 30-ին) ոստիկանութիւնն սկսեց կանանց ու երեխաներին տներից դուրս քշել, նուաստացնելով ու դաժան ծեծելով նրանց, հարուածներով ու հայհոյանքներով ստիպելով, որ ճանապարհին ընկածները վեր կենան ու շարունակեն գնալ: Մի քանիսը, որ կարողացան փախչել, վերադարձան այլանդակուած դէմքերով եւ ձեռքերը կտրած: Այսպիսի վնասուածքները հաստատում էին տեղահանուածների ճակատագրի մասին խօսակցութիւնները: Ամերիկացիների տարածքը դեռեւս խիստ հսկողութեան տակ էր: Նրանց թոյլ չէին տալիս, որ ընդունեն, ներս տանեն այդ խեղճերին, այլ կարող էին միայն վերջիններիս հետ խօսել դարպասի մօտ, մի կտոր հաց կամ մի քիչ գումար տալ, իսկ յետոյ նրանց կրկին հաւաքում ու հեռացնում էին:

Միս Շէյնն իր կայանը հաստատել էր օրիորդաց վարժարանում, որտեղ իր աշակերտ աղջիկներից բացի մի քանի կին ու երեխայ կար. նրանք եկել էին իր մօտ պաշտպանութիւն գտնելու յոյսով: Տեղահանութիւնն սկսուելուց մէկ-երկու օր անց նա, իբրեւ թարգման, Միս Մաք-Լարէնին ուղեկցեց Վալիի մօտ եւ խնդրեց, որ դպրոցի աղջիկներին եւ դպրոցում գտնուող կանանց թոյլատրուի մնալ: Վալին ասաց, որ նա կարող է իր աշակերտուհիներին տանել խարբերդ եւ այնտեղ տեղաւորել դպրոցում: Միս Մաք-Լարէնը գիտէր, որ խարբերդի դպրոցական շէնքերը կառավարութիւնը վերցրել էր որպէս զինուորական հիւանդանոց օգտագործելու համար, եւ որ ճանապարհները ծածկուած էին մեռելաւների դիակներով: Նա իսկոյն մտածեց նաեւ այն կանանց ու փոքրիկ երեխաների ճակատագրի մասին, որոնց ստիպուած էր լինելու լքել: Ուստի պատասխանեց, որ եթէ Վալին անկեղծ է խօսում, եւ եթէ իրօք թոյլ է տալիս, որ աղջիկներին անվտանգ տանելի խարբերդ, ապա ինքը կհամաձայնի նաեւ, որ նրանք խաղաղ եւ ապահով մնան Բաղէշում, մինչեւ ճանապարհորդելն անվտանգ դառնայ: Վալին պատասխանեց, թէ Կոստանդնուպոլսից հրաման է եկել, որ ոչ մի հայ չպիտի մնայ Բաղէշում. «[Հարցն այլեւս] իմ պատասխանատուութեան ծիրում չէ»:

«Այդ դէպքում ես նրանց չեմ յանձնի», — պատասխանեց Միս Մաք-Լարէնը:

Նա մտադրուել էր պատնէշներով ամրացնել դպրոցի շէնքը: Թւում էր՝ անհրաժեշտ է աներեր դիրք ընդունել այս հարցում: Եւ ո՛չ նա, ո՛չ իսկ իր

գործընկերները չէին հաւատում, թէ իշխանութիւնները կգիմեն ծայրայեղ միջոցներ՝ մի քանի կանանց ու աղջիկներին հասնելու համար:

Ի վերջոյ Վալին համաձայնեց, որ «մինչեւ վերջին պահը» կանայք ու աղջիկները մնան դպրոցում: Միս Մաքլարէնը հարցրեց, թէ ում կարող է դիմել՝ նրանց վերջնական անվտանգութիւնն ապահովելու հարցով, եւ Վալին տուեց այն զինուորական հրամանատարի անունը ու հասցէն, որ կանանց հարցի վերաբերեալ որոշում էր կայացրել: Յիշեալ անձը զօրքի հետ առաջնագծում էր, ուստի Միս Շէյնն անմիջապէս նրան նամակ գրեց՝ պատճէնն ուղարկելով նաեւ Վալին եւ հետը կցելով կանանց եւ աղջիկների ցուցակը, որը նա պահանջել էր իրենից: Այդ նամակին երբեք պատասխան չեկաւ:

Միսիօներներն ստիպուած եղան խոստանալ, որ այլեւս նոր մարդ, ոչ ոքի չեն ընդունի իրենց տարածքում: Եւ նրանք աշխատում էին պահել այդ խոստումը՝ իբրեւ միակ յոյս՝ գոնէ մի քանիսին փրկելու համար:

Ոստիկանութիւնն ասես ցնորուել էր հայի արեան ծարաւից: Մի օր Միս Շէյնն իր պատուհանից տեսաւ մի ալեհեր ծեր կնոջ, որ ժանդարմի հրացանի հարուածների տարափին դիմակայելով փորձում էր փողոցով առաջանալ: Մի աւելի երիտասարդ կին, ինքն այնքան թոյլ, որ հազիւ էր քայլում, աշխատում էր օգնել նրան: Յանկարծ ժանդարմը ցատկեց նրանց առաջ՝ սուիչն ուղղելով ծեր կնոջ կողմը, պատրաստուելով խողելու: Կինը մի յուսահատ կոյտ դարձած փրկեց նրա ոտքերի առաջ: Այդ պահին նա կնոջ գօտուց եւ մագերից բռնելով քարշ տուեց քարքարուտ փողոցով: Կարծելով, թէ մեռած է, նրան թողեցին՝ աղջիկների դպրոցի մօտ, եւ թոյլ տուեցին ներս տանել: Նա բարեկիրթ ու ազնուական դէմք ունէր, եւ պարզուեց, որ մեծատուն ընտանիքից էր: Երբ պաշտօնեաներն իմացան, թէ ինչպէս էր նրա հետ վարուել ժանդարմը, խիստ բարկացան. ենթադրելի էր, որ նա գիտէր, թէ մեծ գումարը որտեղ է թաքցուած, եւ նրանք ուզածը դա էր: Խեղճ կինը երկար չապրեց, որ կարողանար բացայայտել իր գաղտնիքը: Մէկ այլ ծեր կին մահացաւ դպրոցում. նրան գտել էին դրսում՝ փողոցում պառկած, ընդամենն այնքան ուժ էր ունեցել, որ մի կերպ բարձրացնի ձեռքը՝ փորձելով հեռու պահել շանը, որ քթով շօշափում էր իր դէմքը: Մի քանի անգամ միսիօներներին թոյլ տուեցին ներս բերել մահամերձ վիճակում յայտնուածներին:

Կանանց ու երեխաների գոչիւններն ու ճիշերը լսելի էին օրն ի բուն,

գրեթէ ցանկացած պահի: Սակայն գիշերուայ խաւարում հնչող կանչերն առաւել սրտաճմլիկ էին:

«Մի անգամ,— գրում է Միս Շէյնը,— սարսափահար արթնացայ մի կնոջ ահաւոր ճիչից, որին յաջորդեցին աղաղակներ ու աղաչանքներ, որոնց պատասխանը լոկ տղամարդկանց ծաղրական հռհռոցն էր»: Մօտ երկու ժամ ես լսում էի այդ կնոջ խուլ հառաչանքները, որ նման էին կտտանքների ենթարկուած կենդանու կաղկանձի: Զայնն աստիճանաբար մարեց, յետոյ՝ լռութիւն:

Մի օր նայում էի ներքեւի փողոցում հաւաքուած կանանց ու երեխաների խմբին:

Ժանդարմը նրանց ճանապարհից դուրս հանեց, մի կողմ տարաւ, ուղիղ պատուհանիս տակ, ապա ստիպեց կանգ առնել: Մի քանի կին փող տուեցին ժանդարմներին, ինչից յետոյ նրանց ազատ արձակեցին: Նրանք խուճապահար կենդանիների պէս խելապատառ վազում էին տարբեր ուղղութիւններով՝ ապահով վայր որոնելով. ո՞ր կարող էին գնալ: Իրենց համար ապահովութիւն ամենեւին գոյութիւն չունէր (ընդգծումը հեղինակինն է): Իրենց ազատ արձակողի երեսի սատանայական ժպիտը ցոյց էր տալիս, որ նա ընդամենը վայելում էր այդ խաղը: Այս դէպքն իմ մտքում հաստատեց այն լուրը, թէ ժանդարմները կաշառք էին վերցնում կանանցից, ովքեր հոգեպահուստ գումար ունէին, բայց հետագայում այդ կանայք կրկին գերեվարւում էին, նրանց կրկին ճանապարհից դուրս էին հանում ու մի կողմ տանում»:

«Զգուշաւորութեամբ գործելու շնորհիւ մեզ յաջողուեց մօտ երեսուն փոքրիկի ընդունել: Նրանք սովալլուկ եկել էին մեր դարպասների մօտ, իսկ պահակները դրան չխոչընոտեցին: Իրականում առաջին մի քանիսին մեզ մօտ բերել էին հէնց թուրք զինուորները: Մենք գիտակցում էինք, որ փոքրիկներին չենք կարող պահել, բայց ուխտել էինք հոգ տանել նրանց մասին որքան հնարաւոր է: Նրանցից մէկը մեր Դատուանի ուսուցչի դուստրն էր: Իր աչքերն այնպիսի մուգ կապոյտ գոյն ունէին, որով երկինքը ներկւում է մօտալուտ փոթորիկի ժամանակ: Նա միշտ խելօք էր, բայց այնքան անուշիկ, որ երբեք ուշադրութիւնից դուրս չէր մնում: Նրա փոքրիկ դէմքն անսահման լուրջ, տպաւորիչ էր: Այդպիսին էին նաեւ բոլոր միւս փոքրիկների երեսները: Նրանց դէմքերին մշտապէս տխուր մտախոհութեան արտայայտութիւնն էր: Իր մանկական պարզ ու անմիջական կերպով մի անգամ նա աղջիկներին ասաց իր հօրն սպանող քրդի

անունը, եւ աւելացրեց. «Թող ինքն էլ այդպիսի մահով հեռանայ»: Որոշ ժամանակ անց նա հիւանդացաւ ու չկարողացաւ ապաքինուել:

Ի վերջոյ մի ժանդարմ եկաւ, որ տանի այս որբերին: Նրանց մէջ էր նաեւ մի փոքրիկ աղջնակ՝ երկուից երեք տարեկան, Բիթլիսի ամենայարգուած ընտանիքներից մէկի թոռնուհին: Իրենն ամենաքաղցր, ամենահմայիչ մանկական դէմքն էր, որ երբեւէ տեսել եմ: Ամենքս էինք սիրում նրան: Երբ նրան միւսների հետ շարք կանգնեցրին, ես վազեցի, գրկեցի նրան եւ աղաչեցի, որ թոյլ տան, որ պահեմ իրեն: Ուստիկանը մերժեց: Աղջնակի անմեղ ու միամտութեամբ լի դէմքն անգամ քարէ սիրտ կփափկեցնէր: Նա թոթով քայլում էր միւսների հետ, բայց մինչեւ դարպասին հասնելը հիւանդանոցում աշխատող մի թուրք նրան գիրկն առաւ, եւ նրան թոյլ տուեցին, որ պահի աղջնակին: Սակայն մանկիկը երեսը մի կողմ էր շրջում, գալարւում-ձգւում էր, որպէսզի դուրս գայ նրա գրկից: Նա տուն տարաւ աղջկան, եւ իր ընտանիքը փորձեց աղջնակի համակրանքը շահել բարի վերաբերմունքով, բայց նա ընդվզեց: Ի վերջոյ թուրքն աղջկան յանձնեց մեր կանանցից մէկի խնամքին:


Որքան գիտեմ, բացառութեամբ մի դէպքի, իսլամ ընդունելու ընտրութիւն չի տրուել աղքատ շերտերի տղամարդկանց եւ տղաներին, ինչպէս նաեւ կանանց: Մինչդեռ բարեկեցիկ ընտանիքներից սերող կանանցից շատերին համոզում էին, որ իսլամ ընդունեն: Քաղաքի կենտրոնական թաղամասից երեք կիւն գալով մեզ պատմեցին, որ իրենց սպառնացել են՝ իսլամ ընդունելուց հրաժարուելու դէպքում կքշեն աքսորի-մահուան ճանապարհներով: Նրանցից մէկը մեր օրիորդաց դպրոցում դասաւանդող մի ուսուցչի քոյրն էր: Աւելի ուշ (երբ հիւանդութեամբ գամուած էի անկողնուն) ուսուցիչներիցս մէկը պատմեց ինձ, որ այդ կինը հրաժարուել էր իսլամ ընդունել եւ արտաքսուել էր իր տասը տարեկան դստեր հետ միասին: Երկուսին էլ քրդերը տարել էին: [Ապա] Մայրը եկել էր դպրոց՝ մի քրդուհու ուղեկցութեամբ եւ քրոջից տասը լիրայ էր խնդրել՝ ասելով, որ քրդերն սպառնացել են սպանել իր դստերը, եթէ այդքան փող չտայ, բայց եթէ տայ, իրեն թոյլ կըտան աղջկան տեսակցել: Գումարն ստանալով նա հեռացաւ: Նրա մասին այլեւս ոչինչ չլսեցինք: Իմ հիւանդութիւնից որոշ ժամանակ անց ինձ հիւրընկալել էր մի թուրք սպայի կինը, նա եւ իր ամուսինը բարեսրտութիւն էին դրսեւորել հայերի նկատմամբ եւ ջերմ վերաբերմունք ունէին մեր հանդէպ: Նա ասաց, որ իրենք գտել են այդ տասնամեայ փոքրիկ աղջկան՝ փողոցներում անտիրական

թափառելիս, կիսամերկ եւ սարսափելի վիճակում, որին դաժան են վերաբերուել՝ ամենաանմարդկային ձեւով: Իրենք նրան ներս էին թողել, եւ մի ծեր հայ կին էր հոգ էր տանում նրա մասին: Նա նաեւ ասաց, որ իրենք եւս զրկուել են իշխանութիւնների բարեհաճութիւնից, քանի որ համամիտ չեն եղել հայերի հանդէպ վարուող քաղաքականութեանը, եւ այդ իսկ պատճառով իրենց ուղարկում են Հալէպ:


Մեր դպրոցականներից՝ անմեղ դէմքով մի փոքրիկ տղայ, որ քաղաքի տարհանման ժամանակ կարողացել էր վերադառնալ մեր տարածք, պատմեց ինձ, որ ինքը կանանց եւ երեխաների մի մեծ խմբի մէջ է եղել, որոնց ճանապարհից դուրս են հանել: Ինքը ճողոպրել էր քաղաքից քիչ հեռու եւ վերադարձել մի բարեկամ թուրքի տուն: Սակայն թուրքը, պնդել էր, որ նա մոլուկման դառնայ, ուստի ինքը փախել էր: Փախուստից առաջ ճանապարհին նա տեսել էր, թէ ինչպէս գնդակահարեցին երեխային գրկած մի երիտասարդ կնոջ, քանի որ վերջինս ուժ չէր ունեցել միւսներին համաքայլ ընթանալու: Նրա մարմինը թողել էին ընկած տեղում, իսկ երեխան դեռ իր գրկում էր: Մեր աշակերտուհիներից մէկին բանտ էին գցել, բայց հետագայում նրան ազատ էին արձակել եւ թոյլ տուել վերադառնալ Մուստաֆա բէյի՝ զինուորական հիւանդանոցների տեսուչի տուն, որտեղ նա մինչ այդ ապրում էր: Նա ինձ պատմեց, թէ բանտը լեցուն է կանանցով ու երեխաներով, որոնց այնտեղ պահում են առանց հաց ու ջրի:

Շատ կանանց պահում էին մի հայկական եկեղեցու բակում, միւսներին՝ մեծ մի տանը, որն անմիջապէս ամերիկեան հաստատութեան դիմաց էր, իսկ այլոց, ինչպէս կենդանիների, հաւաքել էին բաց դաշտում՝ հանրային ճանապարհի եւ գետի միջեւ՝ քաղաքից ոչ շատ հեռու գտնուող մի վայրում, որ «Արաբի կամուրջ»¹⁸ էր կոչւում: Զինուորներ էին կանգնեցրել նրանց հսկելու համար: Ո՛չ պատսպարուելու տեղ կար, ո՛չ առանձնանալու: Օր օրի՝ այս կանայք, որոնց մեծ մասը սովոր էր իրենց տան յարմարաւէտութեանը, եթէ ոչ շքեղութեանը, պահւում էին այնտեղ յուլի-

¹⁸ Այս տեղանունն առկայ է նաեւ գնդապետ Տ. Բաղդասարեանի «Օրագրութեան» մէջ, որ հատուածական տպագրուել է «Ազգարարում». «Կիրակոս իր հինգ եղբայրներէն երեքը կորսնցնելէ յետոյ, մնացած եղբօր հետ Քրդական տարագ հագած (լաւ քրդերէն կը խօսին) կը հեռանան Քաղաքէն եւ անտանելի դժուարութիւններով կը հասնին Բիթլիս, Արաբի կամուրջ կոչուած վայրը կը հանդիպին 200 հայ կին եւ երեխաներու, որ քիւրդերը բերած էին Գետը թափելու համար». տե՛ս «Ազգարար» (Բէյրութ), Ժ. տարի, հ. 478, 28 գեկտ., 1951, էջ 6, 22:



Նկ. 1.



Նկ. 2.

The Tragedy of Bitlis

By
GRACE H. KNAPP

Being Mainly the Narratives of
GRISELL M. McLAREN
AND
MYRTLE O. SHANE

ILLUSTRATED



NEW YORK		CHICAGO
Fleming	H. Revell	Company
LONDON	AND	EDINBURGH

սեան տապի ներքո եւ ամբողջովին մատնուած իրենց հսկող վայրի գազանների կամքին:

Ոմանք մի կերպ կարողացան փախչել՝ հսկիչներին կաշառելով կամ գիշերային մթութեան քողի ներքոյ թաքչելով: Իսկ զինուորների ձեռքին իրենց կրած տանջանքները, որ նրանք պատմեցին միսիօներներին, այնքան ահասարսուռ էին, որ անկարելի է կրկնել: Ժամանակ անց երիտասարդ եւ գրաւիչ կանանց տարան թուրքական կամ քրդական տներ, իսկ մնացածներին ուղարկում էին «ճանապարհով ներքեւ»՝ մեծաւ մասամբ՝ դէպի մահ: Շատերն, այլեւս չկարողանալով դիմանալ խոշտանգումներին ու նուաստացումներին, ազատուելու համար իրենց ու իրենց երեխաներին գետն էին նետում: Որոշ անուանի քաղաքացիներ իրենց ընտանիքներին թոյն էին տուել. խմում էին, որ թուրքի ձեռքը չընկնեն: Որոշ կանայք զաւակներով հանդերձ հրաժարուել էին լքել իրենց վառուող տները՝ համարելով այդպիսի մահն աւելի նախընտրելի, քան կեանքը թուրքական հարեմում: Խաչիկ քահանայի տասներեքամեայ դուստրը, տեսնելով «Թոյն» գրութեամբ մի սրուակ Միս Մաքլարէնի սենեակում, ասել էր տան կանանց. «Միս Մաքլարէնի սենեակում թոյնի սրուակ կայ, եւ եթէ թուրքերը փորձեն ինձ տանել, ես այդ թոյնից կըխմեմ»: Կանանց տեղահանումն սկսուեց յուլիսի առաջին շաբաթուանից. միայն մէկ շաբաթ ընդհատուելով՝ այն ամիսներ տեւեց:

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Եղեռն, ցեղասպանութիւն, Բիթլիս, Բաղէշ, Վան:

РЕЗЮМЕ

В статье рассматриваются жизнь и наследие Грейс Хигли Кнэпп (1870—1953) — американской христианской миссионерки и учительницы, ставшей очевидцем Геноцида армян. Родившись в Битлисе в семье миссионеров, Кнэпп провела значительную часть жизни в Османской империи, преподавая и служа

в таких городах, как Битлис, Эрзрум и Ван. Её свидетельства, особенно в книгах «Миссия в Ване во время войны» и «Трагедия Битлиса», являются одними из самых ранних свидетельств очевидца о Геноциде армян.

SUMMARY

The article examines the life and legacy of Grace Higley Knapp (1870–1953), an American Christian missionary and teacher who witnessed the Armenian Genocide. Born in Bitlis to a family of missionaries, Knapp spent a significant part of her life in the Ottoman Empire, teaching and serving in cities such as Bitlis, Erzurum, and Van. Her accounts, particularly in the books “The Mission at Van in War Time” and “The Tragedy of Bitlis” are among the earliest eyewitness accounts of the Armenian Genocide.

